ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱՐԱՄ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 21-ի առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության մի քանի միաբանների և աշխարհական հայորդիների ուղեկցությամբ:

Մայր Աթոռում Արամ Ա Կաթողիկոսին դիմավորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Եղբայրական ողջագուրումից հետո Մայր Տաճարի զանգերի ղողանջների ներքո եկեղեցականների հանդիսավոր թափորով Ամենայն Հայոց Հայրապետը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը առաջնորդվեցին Մայր Տաճար:

Հայոց նվիրական Միածնաէջ սրբավայրի Իջման Սուրբ Սեղանի առջև կատարվեց սաղմոսերգություն և գոհաբանական աղոթք, ապա Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարիգալստյան խոսքով դիմեց Արամ Ա Կաթողիկոսին և նրան ուղեկից անձանց: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ Աստված նման առիթներ է շնորհում՝ մեկտեղվելու Մայր Աթոռում, ծնրադրելու և աղոթելու միասնաբար միաբանների հետ Իջման Սուրբ Սեղանի առջև: Ամենայն Հայոց Հայրապետը նաև աղոթք վերառաքեց առ Աստված Հայոց Եկեղեցու և նրա նվիրապետական Աթոռների անսասանության և աշխարհասփյուռ հայ ժողովրդի կյանքում եկեղեցու առաքելության արդյունավորման համար: Վեհափառը հայցեց Բարձրյալին խաղաղ ու բարգավաճ պահել Հայրենի երկիրը, հայոց Արցախ աշխարհը և ի սփյուռս աշխարհի համայն հայ ժողովրդին:

Ապա Սուրբ Էջմիածնում և Հայրենիքում գտնվելու առիթով իր ուրախությունը հայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսը: Նորին Սրբությունը վերհաստատեց անհրաժեշտությունը շարունակելու միասնաբար գործել, ծառայել հայ ժողովրդին, Եկեղեցուն և Հայրենիքին, միասնաբար դիմագրավել բոլոր դժվարություններն ի սեր Հայրենիքի զորացման: Արամ Ա Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված առավել պայծառացնի Մայր Աթոռը և Հայոց Եկեղեցին, անսասան ու հզոր պահի Հայրենիքը, միակամ ու հզոր՝ հայ ժողովրդին:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը այցելեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին՝ հայտնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զորակցությունը Հայրենի պետությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը եղան նաև Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում և Հայոց ցեղասպանության թանգարանում: Հուշահամալիրում ծաղկեպսակներ զետեղելուց հետո անմար կրակի մոտ կատարվեց հոգեհանգստյան արարողություն ի հիշատակ 1915 թ. Եղեռնի անմեղ նահատակների:

Նույն օրն ավարտելով իր այցը՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը մեկնեց Բեյրութ (Լիբանան):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ